

**ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ  
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՀՈՂԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲԱԺՆԻ  
/ՄԱՐԶԱՅԻՆ ՀՈՂԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹՅԱՆ/ ԱՎԱԳ ՄԱՍՆԱԳԵՏ**

1 Ընդանուր դրույթներ
<p><b>1.1 Պաշտոնի անվանումը ծածկագիրը</b> Հայաստանի Հանրապետության Լոռու Մարզպետարանի (այսուհետ՝ Մարզպետարան) հողաշինության և հողօգտագործման /մարզային հողային պետական տեսչություն/ բաժնի (այսուհետ՝ Բաժին) ավագ մասնագետ (ծածկագիր՝ 95-3.3-ՄՅ-1)</p> <p><b>1.2 Ենթակա և հաշվետու է</b> Ավագ մասնագետը ենթակա եւ հաշվետու է Բաժնի պետին:</p> <p><b>1.3 Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները</b> Ավագ մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի ավագ մասնագետներից մեկը:</p> <p><b>1.4 Աշխատավայրը</b> Հայաստանի Հանրապետության Լոռու մարզ, ք. Վանաձոր, Հայքի հրապարակ 1</p>
<p style="text-align: center;"><b>2. Պաշտոնի բնութագիրը</b></p> <p><b>2.1 Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները</b></p> <ol style="list-style-type: none"><li>մասնակցում է քաղաքացիների կամ իրավաբանական անձանց սեփականությունը հանդիսացող հողամասերի նպատակային նշանակությունը՝ սեփականատիրոջ նախաձեռնությամբ, սահմանված կարգով փոփոխելու դեպքում, համայնքային բյուջե մուտքագրվող գումարների հաշվարկման աշխատանքներին</li><li>օժանդակում է համայնքներում հողամասերի աճուրդ-վաճառքների, վարձակալության մրցույթների դեպքում հողամասերի մեկնարկային գների հաշվարկման աշխատանքներին</li><li>մասնակցում է մարզպետի կողմից Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Թումանյանի տարածաշրջանի համայնքների վարչական սահմաններում պետական սեփականության հողերի օտարման և օգտագործման տրամադրման աշխատանքներին</li><li>նախապատրաստում է մարզի Թումանյանի տարածաշրջանի համայնքներում հողերի օգտագործման սխեմաները Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատմանը ներկայացնելու համար անհրաժեշտ փաստաթղթեր</li><li>մասնակցում է մարզի հողային հաշվեկշռի կազմման աշխատանքներին</li><li>մասնակցում է մարզի Թումանյանի տարածաշրջանի համայնքներում հողաշինարարության, հողօգտագործման, հողերի պահպանության, նոր հողերի յուրացման, հողային օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողության իրականացման, ապօրինի հողօգտագործման կանխման, կասեցման և վերացման աշխատանքներին</li><li>մասնակցում է հողաշինության և հողօգտագործման բնագավառում մարզի Թումանյանի տարածաշրջանում տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության նկատմամբ վերահսկողության իրականացմանը,</li><li>մասնակցում է Թումանյանի տարածաշրջանի համայնքներում հողօգտագործման արդյունավետությանն ուղղված նպատակային ծրագրերին, հողերի միավորման,</li></ol>

բաժանման և կոնսոլիդացիայի նախագծերի, ինչպես նաև ոլորտի նորմատիվ-իրավական ակտերի նախագծերի մշակման աշխատանքներին

9. օժանդակում է Թումանյանի տարածաշրջանի համայնքներում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի մասնավորեցման և հետագա օգտագործման ուղղությունների, հողերի պահպանության, միավորման և վերաբախման նպատակային ծրագրերի մշակման աշխատանքներին
10. օժանդակում է Թումանյանի տարածաշրջանի համայնքներում հողաշինարարության գծով քարտեզագրական, հողային, ագրոքիմիական, երկրաբուսաբանական և այլ հետազոտական աշխատանքներին
11. մասնակցում է Թումանյանի տարածաշրջանի համայնքներում չօգտագործվող, անարդյունավետ օգտագործվող կամ իրենց նպատակային նշանակությանն անհամապատասխան օգտագործվող հողերի գույքագրման և հաշվառման աշխատանքներին
12. իրականացնում է Թումանյանի տարածաշրջաններում հողային օրենսդրության պահանջների խախտումների կանխման և կանխարգելման աշխատանքներ
13. իրականացնում է Թումանյանի տարածաշրջանի համայնքներում սահմանանիշերի ու գեոդեզիական կետերի պահպանման աշխատանքներ

### **Իրավունքները՝**

1. պահանջել և ստանալ համապատասխան տեղեկատվություն
2. ծանոթանալ փաստաթղթերին, կատարել անհրաժեշտ ուսումնասիրություններ և հաշվարկներ
3. ուսումնասիրել և քննարկել Թումանյանի տարածաշրջանի համայնքներում կազմված հողաշինարարական գործերը
4. Ուսումնասիրել և քննարկել Թումանյանի տարածաշրջանի համայնքներում կազմված հողաշինարարական գործերը
5. Թումանյանի տարածաշրջանի համայնքներից պահանջել և ստանալ հողերի բաշխվածության վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվություն
6. Թումանյանի տարածաշրջանի համայնքներից պահանջել և ստանալ անհրաժեշտ տեղեկատվությունը, ուսումնասիրել և քննարկել դրանք
7. վերահսկողության ընթացքում կազմված արձանագրությունների վերաբերյալ կատարում է ուսումնասիրություններ ու վերլուծություններ, ամփոփում և արդյունքների վերաբերյալ Բաժնի պետին ներկայացնում համապատասխան առաջարկություններ
8. ծանոթանալ Թումանյանի տարածաշրջանի համայնքներում ՏԻՄ- երի կողմից ընդունված նորմատիվ իրավական ակտերին, քաղաքաշինական փաստաթղթերին, կատարել քննարկումներ և վերլուծություններ
9. պահանջել և ստանալ հողերի միավորման և վերաբախման նպատակային ծրագրերի վերաբերյալ համապատասխան նյութեր և փաստաթղթեր
10. ներկայացնել առաջարկություններ և եզրակացություններ իրականացված աշխատանքների արդյունքների վերաբերյալ
11. պահանջել և ստանալ հողերի գույքագրման և հաշվառման վերաբերյալ տեղեկանքներ, կատարել շրջայցեր, ուսումնասիրություններ
12. պահանջել և ստանալ հողերի օգտագործման և պահպանման նպատակով իրականացված աշխատանքների վերաբերյալ տեղեկանքներ, կատարել շրջայցեր
13. կատարել սահմանանիշերի ու գեոդեզիական կետերի տեղանքի ուսումնասիրություններ

### **Պարտականությունները՝**

1. տրամադրել մասնագիտական ու մեթոդական խորհրդատվություն

2. Թումանյանի տարածաշրջանի համայնքներում կազմված հողաշինական գործի վերաբերյալ ներկայացնել առաջարկություններ
3. համայնքների վարչական սահմաններում պետական սեփականության հողերի օտարման և օգտագործման տրամադրման վերաբերյալ ներկայացնել առաջարկություններ
4. ներլուծել և ամփոփել ստացված տեղեկատվությունը և այն ներկայացնել բաժնի պետին
5. կատարել վերլուծություններ և ներկայացնել առաջարկություն
6. տիրապետել համապատասխան օրենսդրությանը, նորմատիվ իրավական ակտերին, ներկայացնել առաջարկություններ հողօգտագործման արդյունավետությանն ուղղված նպատակային ծրագրերի կազմման համար
7. ներկայացնել առաջարկություններ՝ պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի մասնավորեցման և հետագա օգտագործման ուղղությունների, հողերի պահպանության, միավորման և վերաբախման նպատակային ծրագրերի կազմման համար
8. հողօգտագործման արդյունավետությանն ուղղված նպատակային ծրագրերի, հողերի միավորման, բաժանման և կոնսոլիդացիայի նախագծերի վերաբերյալ տրամադրել մասնագիտական ու մեթոդական խորհրդատվություն
9. կազմել համապատասխան աղյուսակներ ու տեղեկանքներ

**3. Պաշտոնին ներկայացվող պահանջները**

**3.1 Կրթության, որակավորման աստիճանը**  
 Բարձրագույն կրթություն

**3.2 Մասնագիտական գիտելիքները**  
 Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ

**3.3 Աշխատանքային ստաժը եւ (կամ) աշխատանքի բնագավառում փորձը**

Հանրային ծառայության առնվազն մեկ տարվա ստաժ կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ ֆինանսավարկային բնագավառում՝ երեք տարվա աշխատանքային ստաժ:

- 3.4. Անհրաժեշտ կոմպետենցիաներ**  
**Ընդհանրական կոմպետենցիաներ**
1. Խնդրի լուծում
  2. Հաշվետվությունների մշակում
  3. Տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն
  4. Բարեվարքություն
- Ընտրանքային կոմպետենցիաներ**
1. Կոնֆլիկտների կառավարում
  2. Բողոքների բավարարում
  3. Ժամանակի կառավարում
  4. Տեղեկատվական տեխնոլոգիաներ և հեռահաղորդակցություն
  5. Ծառայությունների մատուցում

**4. Կազմակերպական շրջանակ**

**4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը**  
 Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների բնույթով պայմանավորված մասնագիտական գործունեության վերջնարդյունքին նպաստող միջանկյալ արդյունքի ստեղծման համար:

**4.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները**

Կայացնում է որոշումներ կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների բնույթով պայմանավորված՝ մասնագիտական գործունեության վերջնարդյունքին նպաստող միջանկյալ արդյունքի ստեղծման շրջանակներում:

**4.3. Գործունեության ազդեցությունը**

Ունի տվյալ մարմնի նպատակների և խնդիրների իրականացման համար մասնագիտական գործունեության տարածքային ազդեցություն:

**4.4. Շփումները և ներկայացուցչությունը**

Իր իրավասության շրջանակներում շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս համապատասխան մարմնի այլ կառուցվածքային ստորաբաժանումների ներկայացուցիչների, այլ մարմինների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, հանդես է գալիս համապատասխան մարմնի ներսում և համապատասխան մարմնից դուրս ձևավորված մասնագիտական աշխատանքային խմբերում:

**4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը**

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում է մասնագիտական խնդիրներ և ներկայացնում խնդիրների լուծման տարբերակներ, մասնակցում է կառուցվածքային ստորաբաժանման առջև դրված խնդիրների լուծմանը:

ՀՀ ԼՈՒՌԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ  
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ  
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

 Invalid signature

X 

ՅՐԱՅՐ ՊԱՊՈՅԱՆ

Հ.ՊԱՊՈՅԱՆ